յանձն, ապա չնորհեաց նմա մուրհակաւ և յետկարիս 500 դիւղս ի կալուածոց իւրոց, որոց տարեկան չահն էր 1200 քսակ ըստ վկայելոյ թարգմանին, տարագրել զվարդապետութիւնս կապանօք ի սահմանաց անտի, եւ զինչս նոցա տալ ինքեան. դիւրաւ զիջաւ իշխանն ի բանս եպիսկոպոսին, մերկացուցին զնոսա և եռուն ի ձեռս չորից զինուորաց, տուեալ ըռեալս 50 ի պէտս ճանապարհի, եւ զկնի 48 աւուրց հասին ի Մասուայ, ընդ իշխանութեամբ եգիպտոսի, և քաղաքապետն առեալ զնոսա ի ձեռաց զինուորաց պահեաց առ իւր զաւուրս 20 կերակրելով և մխիթարելով, և տուեալ ըռեալս 10 առաքեաց զնոսա ի ձիւտէ. Գրիգոր և Ստեփան սպասաւորք նոցին հիւանդացեալ մնացին յեթովպիա, եւ նաւեալ անտի հասին ի լեառն Սինա, եւ ապա ուղտուք յեգիպտոս, զոր ընկալեալ Կիրակոս եպիսկոպոսի Առաջնորդի տեղւոյն, եւ դարմանել զհիւանդութիւնս նոցա բժշկեաց և մխիթարեաց. զայս ամենայն համառօտիւ գրէ ի նամակի իւրում նա ինքն Յակոբ վարդապետ առ Պօղոս եպիսկոպոս, և յաւելու թէ անպատմելի են չարչարանքն զոր կրեցաք յեթովպիա (1826. ի 1 Մայիսի)։ Յակոբ վարդապետ զկնի աւուրց ինչ վախճանեցաւ աղետալի մահուամբ անդ յեգիպտոս դիպուածով իւիք։

Բդեշխն Լասդիկեայ յետ երկուց ամաց բռնացեալ ի վերայ հոգեւոյն Հայոց՝ եղեալ էր զօրս, և հոգեւոր Տեսուչն ոչ կարացեալ տոկալ բռնութեանց և աղաղակի նոցին փակեալ զեկեղեցին խոյս ետ անտի, և ամանք ի ժողովրդոց տեղւոյն մնացեալ անմխիթար ցրուեցան, և մնացին քանի մի աղքատք, իսկ զօրքն քակեալ հանէին զմարմարիոն քարինս զերկաթս եւ զայլ կազմածս տանն և վաճառէին, և ոչ ոք իշխէր նոցա ասել ինչ, և ի նմին ամի եկեալ ուխտաւորաց իջեւանեցան ատ և անդ և հանդիպեցան բազում ինաստուց և նեղութեանց. տեսեալ զյոսոսիկ Մկրտիչ և Մելքոն, որք էին անդ սեղանաւորք, մանաւանդ թէ օր քան զօր աւերի և քանդի հոգեւոյն, դրեալ աղդ արարին ի Կոստանդինուպոլիս. և կարապետ Պատրիարք մատոյց գիր ի Դուռն, ոլի հրովարտակաւ եղեցեն անտի զօրքն, և Բդեշխք կողմանցն այնոցիկ մի իշխել